Գեղի

Բնակչություն՝ 185

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 27 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Գեղին գտնվում է համանուն գետի աջ ափին և հիշատակվում է 9-10-րդ դարերից: Հնում այստեղ էր գտնվում Սյունիք աշխարհի նշանավոր Գեղի բերդը, որի ավերակները այժմ հազիվ են նշմարվում: Գեղիի շրջակայքում կան հին գերեզմանոցներ՝ խաչքարերով, գյուղատեղի և եկեղեցու ավերակներ: Դատելով հին (13-րդ դ.) և նոր (18-րդ դ.) հարկացուցակներում Տաթևի վանքին տրված հարկերի մեծ չափերից, ենթադրվում է, որ այն հնում մեծ բնակավայր է եղել:
Գեղին և հարակից գյուղերը մինչև 1988թ. բնակեցված էին ադրբեջանցիներով և ընդգրկված Գեղիի տնտեսության (կազմավորվել է 1965թ.) մեջ, որը համարվում էր Կապանի շրջանի խոշոր անասնապահական տնտեսությունների մեկը: 1990-ականների սկզբին Գեղին բնակեցվել է բռնագաթված և Կապանի տարածաշրջանի այլ բնակավայրերից եկած բնակիչներով, իսկ մի շարք բարձր լեռնային գյուղեր (Կիցք, Քարուտ և այլն) չեն բնակեցվել:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 17199 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 9265 հա, որից՝
- վարելահող՝ 39 հա, բազմամյա տնկարկ՝ 6 հա, խոտհարք՝ 138 հա, արոտ՝ 6873 հա, այլ հողատեսք՝2210 հա
- բնակավայրերի հողեր՝ 67 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 27 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝15 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 5138 հա,
- անտառային հողեր՝ 2488 հա, որից անտառածածկ՝ 989հա
- ջրային հողեր՝ 199 հա